ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 12/17

17.11.2017թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)**,

քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ (ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ., ՀՕ-248)[1] 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 143-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Արամ Հակոբյանը (ներկայացուցիչներ՝ Տիգրան Եգորյան, Դավիթ Գյուրջյան, այսուհետ՝ Դիմող) 13.07.2017թ. անհատական սահմանադրական դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 143-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 4-րդ, 27-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 12-րդ մասի, 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 143-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներն իրենց համակցությամբ ամրագրում են իրարամերժ կարգավորումներ՝ կապված կալանքը գրավով փոխարինված լինելու պայմաններում կալանավորված անձի ազատ արձակման նախապայմանների հետ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 12-րդ մասը նախատեսում է ընդամենը մեկ նախապայման՝ դատարանի կողմից նշանակված գրավը լրիվ մուծված լինելու փաստի հավաստում, որն անմիջապես առաջացնում է կալանավորված անձին անհապաղ ազատ արձակելու քրեակատարողական հիմնարկի վարչակազմի պարտականությունը, որպես անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման վերացման, այդ իրավունքի վերականգնման առավել արդյունավետ միջոց:

Ի տարբերություն նշված իրավադրույթի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 143-րդ հոդվածի 5-րդ մասի

[1] Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

դրույթները նախատեսում են կալանավորված անձին գրավը մուծված լինելու պայմաններում ազատ արձակելու ավելի բարդացված մեխանիզմ և նախապայմաններ, հատկապես նշվածներից առաջինն անձի ազատ արձակման համար նախատեսում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից դատավարական որոշման կայացման, իսկ երկրորդը՝ նույն վարույթն իրականացնող մարմնի կողմից անձին ազատ արձակելու հանձնարարականի առկայության անհրաժեշտություն:

Դիմողը գտնում է, որ նման իրարամերժ կարգավորումների գոյությունն ստեղծում է իրավական անորոշություն, որի պայմաններում կալանավորված անձի, նրա պաշտպանի, նաև սահմանված գրավի չափը մուծած անձի համար որոշակի չէ, թե հատկապես որ պետական մարմնին պետք է ներկայացվի գրավը մուծված լինելու մասին ապացույցը, որպեսզի պետությունն անհապաղ միջոցներ ձեռնարկի անձի ազատ արձակման ուղղությամբ և հնարավոր լինի հնարավորինս արագ վերականգնել անձի սահմանափակված իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներով ամրագրված՝ վարույթն իրականացնող մարմնի որոշման և/կամ հանձնարարության առկայության անհրաժեշտությունը չի կարող որևէ իրավաչափ նպատակ հետապնդել, երբ կալանավորված անձի պահման հիմնարկ է ներկայացվում դատարանի՝ գրավ կիրառելու մասին որոշումը, և այդ գրավը մուծված լինելու մասին ապացույցը: Նշված դրույթներով նախատեսված լրացուցիչ պայմաններն արհեստականորեն բարդացնում են անձի անհապաղ ազատ արձակման գործընթացը՝ հանգեցնելով դրա առավել ժամանակատարության, ինչպես եղել է դիմողի դեպքում: Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներն ամրագրում են անձի համար ավելի անբարենպաստ, արհեստականորեն բարդացված, իրավաչափ նպատակ չհետապնդող և իշխանությունների տարանջատման սկզբունքին հակասող լրացուցիչ նախապայման և հակասում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված՝ անձի անձնական ազատության իրավունքին:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ու 143-րդ հոդվածի 5-րդ մասը բովանդակում են դրույթներ, որոնցով, ըստ էության, ամրագրվում է դատարանի՝ անձի նկատմամբ գրավ նշանակելու մասին որոշման ընդունված լինելու և գրավը մուծված լինելու պայմաններում անձին ազատ արձակելու վարույթն իրականացնող մարմնի կողմից թեկուզև ոչ հայեցողական, սակայն լրացուցիչ որոշման կայացման, դրանով իսկ, ըստ էության, դատարանի որոշման հաստատման անհրաժեշտությունը, ինչն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված՝ իշխանությունների տարանջատման սկզբունքին, այն դեպքում, երբ գործը նախաքննության փուլում է, այսինքն՝ անձին ազատ արձակելու մասին որոշումը կայացնում է կամ այդ մասին հանձնարարությունը տալիս է նախաքննության մարմինը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Անձի անձնական ազատության հիմնական իրավունքն իր ամրագրումն է գտել **ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում**, որի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

6. Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում նույնպես անդրադարձել է անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի բովանդակությանը (տ՛ես ՍԴՈ-827, 12.09.2009, ՍԴՈ-913, 14.09.2010, ՍԴՈ-1059, 23.11.2012, ՍԴՈ-1295, 02.09.2016 որոշումները):

Անձի անձնական ազատության իրավունքն իր ամրագրում է գտել նաև **«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում,** որի 5-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

* * *

Վիճարկվող քրեադատավարական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

1. Մեղադրյալը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի որոշման հիման վրա կալանքից ենթակա է ազատման, եթե՝

6) մուծված է անձին կալանքից ազատելու համար դատարանի կողմից նշանակված գրավը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

5. Գրավի մուծված լինելու մասին ապացույցներ ստանալով՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես հանձնարարում է մեղադրյալին ազատել կալանքից:

Վիճարկվող նորմերի իրավական որոշակիության գնահատման համար կարևոր է դրանք վերլուծել նաև այլ քրեադատավարական նորմերի հետ կապի և փոխկապակցվածության համատեքստում:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի **141-րդ հոդվածի առաջին պարբերության 12-րդ կետի համաձայն՝**

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է՝

12) կալանքից անմիջապես ազատել անձին, որի ազատման համար դատարանի կողմից նշանակված գրավը լրիվ մուծված է:

Վերը նշված քրեադատավարական իրավակարգավորումներով նախատեսված են միմյանց բացառող երեք տարբեր ընթացակարգեր կալանավորումից անձին ազատելու կապակցությամբ:

Մասնավորապես, գրավը կալանքով փոխարինելու և գրավի գումարը մուծելու դեպքում անձն ազատվում է կալանավորումից՝

ա) քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի **որոշման** հիման վրա (ՀՀ քր. դատ. օր. **142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ),**

բ) քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմնի **հանձնարարության** հիման վրա (ՀՀ քր. դատ. օր. **143-րդ հոդվածի 5-րդ մաս),**

գ) գրավը լրիվ մուծված լինելու **փաստի** հիման վրա (**141-րդ հոդվածի առաջին պարբերության 12-րդ կետ):**

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:[2]

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության *(res judicata)* սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների

[2] Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:[3]

Քրեադատավարական իրավակարգավորումների պարագայում հստակ չէ, թե ի վերջո ինչպիսի ընթացակարգով է իրականացվում նշանակված գրավի գումարը մուծած անձին կալանքից ազատելը: Մասնավորապես, կալանքի տակ գտնվող անձի համար կանխատեսելի չէ, թե գրավի գումարը մուծելու դեպքում ո՞ր մարմնին՝ վարույթն իրականացնող մարմնի՞ն, թե՞ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին պետք է դիմի անձն իր ազատման հարցը լուծելու համար:

Ավելին, հասկանալի չէ, թե ինչ կարգով են նշված մարմինները քննարկում անձի դիմումը և ինչ ժամկետներում: Նման անորոշ կարգավորումներն իրավակիրառ պրակտիկայում ըստ էության հանգեցնում են անձի անձնական ազատության իրավունքի խախտման: Դատարանի կողմից նշված գումարը մուծելուց և համապատասխան ապացույցը՝ բանկային փոխանցման անդորրագիրը կալանավորման վայրի վարչակազմին ներկայացնելուց հետո անձն անհապաղ ազատ չի արձակվում և շարունակում է պահվել կալանքի տակ, ինչն անձնական ազատության հիմնական իրավունքի խախտում է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 143-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց են:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան

[3] ՀՀ սահմանդրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը: